

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով «Մաքսային միության մասին» Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև 1995 թվականի հունվարի 6-ին կնքված համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական համայնք հիմնելու մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի, «Միասնական մաքսային տարածքի ստեղծման և Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի վրա,

ելնելով Եվրասիական տնտեսական համայնքի՝ տնտեսական աճին, մարդկանց կյանքի որակի բարելավմանը և բարեկեցությանն ուղղված հիմնական նպատակներից,

համարելով, որ համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնելը անհրաժեշտ է Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի արդյունավետ գործունեության համար,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ՝

### Հոդված 1

#### Սույն Համաձայնագրում գործածվող հասկացությունների սահմանումը

Սույն Համաձայնագրում կիրառվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն»՝ Կողմերի համատեղ գործունեության համակարգում, մշակում և իրականացում՝ Կողմերի տնտեսության

հավասարակշռված զարգացմանը հասնելու նպատակով.

«մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչներ»՝ տնտեսական ցուցանիշների քանակական արժեքներ, որոնք ընդունվում են սույն Համաձայնագրի համաձայն՝ Կողմերի ինտեգրման համագործակցության հաստատուն եւ կայուն զարգացման եւ ընդլայնման նպատակով:

## **Հոդված 2**

### **Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնելու նպատակները եւ սկզբունքները**

1. Սույն Համաձայնագրի նպատակներ են համարվում Կողմերի համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացման ուղղությունների որոշումը եւ դրա համաձայնեցման սկզբունքների, կարգի եւ մեխանիզմի ձեւավորումը:

2. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա՝

- կայուն տնտեսական աճի ապահովում.

- սույն Համաձայնագրով սահմանված հավասարակշռված մակրոտնտեսական ցուցանիշների պահպանում:

Նման սկզբունքները ուղղված են՝ ստեղծելու բարենպաստ պայմաններ Կողմերի տնտեսության ներքին կայունության եւ արտաքին ազդեցության նկատմամբ կայունության բարձրացման համար, ինչպես նաեւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում ինտեգրումը խորացնելու համար:

3. Կողմերը իրականացնում են համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն՝ Կողմերի տնտեսության արդյունավետ գործունեությունը ապահովելու համար:

### **Հոդված 3**

#### **Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները**

Կողմերի համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական նպատակները ներառում են՝

Կողմերի տնտեսության մակրոտնտեսական կայունության եւ զարգացման ապահովումը՝ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում ինտեգրումը խորացնելու համար:

Կողմերի տնտեսության գործունեության միասնական սկզբունքների ձեւավորում եւ դրանց արդյունավետ փոխգործակցության ապահովում.

Կողմերի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների պարամետրերի համաձայնեցում՝ տնտեսական զարգացման կայունության բարձրացման եւ տնտեսական ինտեգրման ավելի բարձր աստիճաններին անցնելու համար պայմանների ստեղծման նպատակով.

Կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման համար ընդհանուր սկզբունքների եւ կողմնորոշիչների մշակում,

### **Հոդված 4**

#### **Մակրոտնտեսական քաղաքականության համակարգման կարգը**

1. Կանխատեսումների՝ ներառյալ մակրոտնտեսական քաղաքականության կանխատեսումային հիմնական պարամետրերի մշակման համակարգումը, իրականացվում է հետեւյալ ուղղություններով՝

Կողմերի տնտեսական զարգացման վերլուծություն եւ մոնիթորինգ.

Կողմերի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների որոշում՝ եռամյա ժամանակահատվածի համար.

Սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների մշակման համար սցենարային պարամետրերի որոշում.

Մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված տնտեսական բարեփոխումների անցկացման եւ մակրոտնտեսական քաղաքականության միջոցների առումով փորձի փոխանակում.

կառուցվածքային՝ արդյունաբերական, ագրարային, տրանսպորտային, էներգետիկ եւ նորարարական քաղաքականության գերակայությունների առումով խորհրդակցությունների անցկացում եւ տեղեկությունների փոխանակում.

Կողմերին՝ կառուցվածքային քաղաքականության իրականացման նախատեսված ուղղությունների եւ ներդրումային նախագծերի մասին տեղեկությունների տրամադրում.

Կողմերի տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության եւ ձեռնարկատիրական ակտիվության պայմանների վրա ընդունվող որոշումների ազդեցության վերլուծությունը:

2. Տարեկան առնվազն մեկ անգամից ոչ պակաս հաճախականությամբ Կողմերը անցկացնում են փորձագետների համատեղ խորհրդակցություն, քննարկում են կանխատեսումների պարամետրերը եւ հիմնական ցուցանիշները, զարգացման աճի եւ սահմանափակման հիմնական գործոնները, քննարկում եւ գնահատում են տնտեսվարող սուբյեկտների գործունեության պայմանները սահմանող հիմնական որոշումների փոխադարձ ազդեցությունը, ինչպես նաեւ ընդունում են համագործակցության խորացմանը եւ ինտեգրման ընթացակարգերի զարգացմանն ուղղված առաջարկություններ:

## **Հոդված 5**

### **Տնտեսական զարգացման եւ ինտեգրման համագործակցության ցուցանիշների ցանկը**

1. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությամբ նախատեսվում է՝

կանխատեսման նպատակով հիմնական սցենարային պարամետրերի որոշում.

տնտեսական զարգացման կայունության բարձրացման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների համաձայնեցում.

Կողմերի տնտեսական եւ ինտեգրման համագործակցության գնահատման նպատակով տնտեսական ցուցանիշների մոնիթորինգ:

2. Կողմերը եռամյա ժամկետով համաձայնեցնում են հետեւյալ արտաքին պարամետրերի ինտերվալային քանակական արժեքները, որոնք գործածվում են Կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները մշակելիս՝

«Brent» ապրանքանիշի նավթի գինը՝

համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերը.

Կողմերի ազգային արժույթների փոխարժեքները ԱՄՆ դոլարի եւ (կամ) եվրոյի նկատմամբ:

3. Կողմերի կենտրոնական (ազգային) բանկերը իրավունք ունեն իրականացնել դրամավարկային քաղաքականություն՝ անկախ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված մակրոտնտեսական ցուցանիշների համաձայնեցված ինտերվալային արժեքներից:

4. Կողմերը ձեւավորում են տնտեսական քաղաքականությունը տնտեսական զարգացման կայունությունը որոշող հետեւյալ քանակական պարամետրերի շրջանակներում՝

պետական բյուջեի (Ռուսաստանի Դաշնության համար՝ դաշնային բյուջեի, Բելառուսի Հանրապետության համար՝ հանրապետական բյուջեի, Ղազախստանի Հանրապետության համար՝ հանրապետական բյուջեի) տարեկան դեֆիցիտը համախառն ներքին արդյունքի 3 տոկոսից բարձր չէ.

պետական պարտքը համախառն ներքին արդյունքի 50 տոկոսից բարձր չէ.

Սղաճի մակարդակը (սպառողական գների ինդեքսը՝ միջին տարեկան կտրվածքով), որը ավելի քան 5 տոկոսային կետով չի գերազանցում Միասնական տնտեսական տարածքի՝ գների ամենափոքր աճն ունեցող անդամ պետության սղաճի մակարդակը:

5. Բացառիկ հանգամանքներում Կողմերը կարող են համաձայնեցված կարգով մեղմել տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական

ցուցանիշների քանակական արժեքները՝ հաշվի առնելով ստեղծված դրությունը:

6. Կողմերը օգտագործում են հետեւյալ ցուցանիշները մոնիթորինգի համար՝  
ինտեգրման եւ տնտեսական կայունության աստիճանը որոշելու նպատակով՝

համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը (տոկոսներ).

բնակչության մեկ անձի համար համախառն ներքին արդյունքը՝ ըստ  
գնողունակության պարիտետի (ԱՄՆ դոլար).

վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների հաշվեմնացորդ (ԱՄՆ դոլար  
եւ համախառն ներքին արդյունքի տոկոսներ).

Ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը (տոկոսներ).

յուրաքանչյուր Կողմի տնտեսությանն ուղղված ազգային ներդրումների, այդ թվում՝  
անմիջական ներդրումների ծավալը՝

Յուրաքանչյուր Կողմի կողմից ազգային տնտեսություն մուտք եղած ներդրումների,  
այդ թվում՝ անմիջական ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլար).

Կողմի արտահանման ընդհանուր ծավալի մեջ յուրաքանչյուր Կողմի մասնաբաժինը  
(տոկոսներ).

Կողմի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ յուրաքանչյուր Կողմի մասնաբաժինը  
(տոկոսներ).

Կողմի արտաքին առևտրի ընդհանուր շրջանառության մեջ յուրաքանչյուր Կողմի  
մասնաբաժինը (տոկոսներ).

## **Հոդված 6**

### **Սույն Համաձայնագրի կատարման փուլերը**

1. Մակրոտնտեսական ցուցանիշների համաձայնեցումը կատարվում է  
փուլերով հետեւյալ հերթականությամբ՝

խորհրդակցությունների անցկացում, անհրաժեշտ նորմատիվային բազայի մշակում  
եւ ընդունում, Կողմերի դիրքորոշումների համաձայնեցում.

Սույն Համաձայնագրի կիրարկման մեխանիզմի մշակում.

Բացառիկ այն հանգամանքները սահմանող չափորոշիչների մշակում, որոնց դեպքում սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված տնտեսական զարգացման կայունությունը որոշող քանակական պարամետրերը կարող են վերանայվել.

տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման անհրաժեշտ մեթոդների համաձայնեցում.

Կողմերի համակարգման եւ փոխգործակցության բարելավում,

2. 2013 թվականի հունվարի 1-ից մակրոտնտեսական քաղաքականության իրականացման համար սկսում են գործել սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված քանակական պարամետրերը: Եթե որեւիցե Կողմի հիմնական տնտեսական ցուցանիշները չեն համապատասխանում Կողմերի մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչներին կամ եթե Կողմերից որեւիցե մեկի մոտ տնտեսական բնույթի լուրջ խնդիրներ են առաջանում, ապա Կողմերի համապատասխան գերատեսչությունները անցկացնում են խորհրդակցություններ՝ տեղի ունեցած շեղումների կարգավորմանն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով:

## **Հոդված 7**

### **Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը համակարգող մարմինը**

1. Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) համակարգում է Կողմերի համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը:

2. Հանձնաժողովը, Կողմերի հետ համաձայնեցնելով, մշակում է եւ Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի Մաքսային միության բարձրագույն մարմնի) հաստատմանն է ներկայացնում Կողմերի մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

3. Կողմերի մակրոտնտեսական քաղաքականության եւ տնտեսության շարունակական մոտարկումը ապահովելու նպատակով Հանձնաժողովը իրականացնում է Կողմերի տնտեսական զարգացման, նրանց կողմից մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում ձեռնարկվող միջոցների մոնիթորինգ, գնահատում է այդ միջոցների համապատասխանությունը Կողմերի մակրոտնտեսական քաղաքականության համաձայնեցված՝ Կողմերի համար ընդհանուր հիմնական կողմնորոշիչների

4. Հանձնաժողովը մշակում եւ Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի Մաքսային միության բարձրագույն մարմնի) հաստատմանն է ներկայացնում առաջացած տնտեսական դրության շտկմանն ուղղված միջոցների մասին առաջարկություններ՝ հաշվի առնելով մյուս Կողմերի տնտեսության վրա այդ միջոցների բացասական ազդեցության կանխարգելումը:

## **Հոդված 8**

### **Կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները**

Սույն Համաձայնագրի դրույթներով չեն շոշափվում Կողմերի՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակիցն են իրենք:

## **Հոդված 9**

### **Փոփոխությունների կատարումը**

Ըստ Կողմերի ձեռք բերած համաձայնության՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:



## **Հոդված 10**

### **Վեճերի կարգավորումը**

Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների անցկացման միջոցով:

Համաձայնության գալու դեպքում այդ վեճերը ցանկացած շահագրգիռ Կողմի կողմից փոխանցվում են Հանձնաժողովի քննարկմանը, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից փոխանցվում են Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## **Հոդված 11**

### **Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու կարգը**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից երեսուն օր հետո:

Սույն Համաձայնագրի ավանդապահ է համարվում Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն:

## **Հոդված 12**

### **Սույն Համաձայնագրին միանալու կարգը**

Սույն Համաձայնագիրը բաց է Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ դարձած այլ պետությունների անդամակցության համար: Սույն Համաձայնագրին միանալու վերաբերյալ փաստաթղթերը հանձնվում են ավանդապահին՝ պահպանելու համար:

Միացած պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու վերաբերյալ փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է ավանդապահի մոտ, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բելառուսի  
Հանրապետության  
Կողմից

Ղազախստանի  
Հանրապետության  
Կողմից

Ռուսաստանի  
Դաշնության  
Կողմից